

From: Press [mailto:press@minagro.am]

Sent: 26 ապրել 2018 ր. 17:58

To: Agro

Subject: FW: Նախարարին կից հասարակական խորհրդին անդամակցության դիմում-հայտ

From: info@hxm.am [mailto:info@hxm.am]

Sent: Thursday, April 26, 2018 5:52 PM

To: press@minagro.am

Subject: Նախարարին կից հասարակական խորհրդին անդամակցության դիմում-հայտ

Հարգելի Գյուղատնտեսության նախարար պարոն Իգնատի Առաքելյան,


Խնդրում եմ «Հայաստանի խաղողագործների միություն» ՀԿ-ն ընդգրկել ՀՀ Գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը:

Հարգանքով՝

Արտակ Սարգսյան

«Հայաստանի խաղողագործների միություն» ՀԿ-ի նախագահ



ՀՀ գյուղատնտեսության նախարարին կից
հասարակական խորհրդի նախագահ
պարոն Իգնատի Առաքելյանին

Արտակ Սարգսյանից

Արմավիրի մարզ, գ. Սարդարապատ, փ. 27, տուն 3
Հեռ. 093 20 35 05, info@hxm.am

«Հայաստանի խաղողագործների միություն» ՀԿ, 03Ա997907

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Առաքելյան,

Խնդրում եմ «Հայաստանի խաղողագործների միություն» ՀԿ ընդգրկել ՀՀ
գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

1. Ամփոփ տեղեկանք վերջին 2 տարում ծավալած գործունեության մասին (2 էջ),
2. Հետաքրքրվածության նամակ (1 էջ),
3. ՀԿ նախագահի անձնագրի պատճենը
4. ՀԿ կանոնադրությունը:

Դիմող՝



Արտակ Սարգսյան

<26> ապրիլի 2018 թ.

«Հայաստանի խաղողագործների միություն» ՀԿ

Գործունեության մասին ամփոփ տեղեկանք

Հայաստանի խաղողագործների միություն ՀԿ-ն հիմնադրվել է 2015 թվականին: Հիմնադիր նախագահ Արտակ Սարգսյանն է:

«Հայաստանի խաղողագործների միություն» հասարակական կազմակերպությունը անձանց շահերի ընդհանրության հիման վրա, ոչ կրոնական հոգևոր ոչ նյութական այլ պահանջմունքեր բարելավելու նպատակով ստեղծված կամավոր հասարակական միավորում է: Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, կամավորությունը, իրավահավասարությունը, ինքնակառավարումը և հրապարակայնությունը:

Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան: Կազմակերպության նպատակներն ու խնդիրներն են՝

- Աջակցել Հայաստանի Հանրապետության խաղողագործության զարգացմանը:
- Աջակցել խաղողագործության բնագավառի մասնագետների սոցիալական և իրավական խնդիրների լուծմանը:
- Նպաստել խաղողագործության ոլորտում առաջավոր փորձի ներդրմանը և զարգացմանը:
- Ապահովել առողջ շրջակա միջավայրի և հողային ռեսուրսների պահամանումը:
- Աջակցել նոր շուկաների ձեռքբերմանը:
- Ներքին և արտաքին շուկաներում իրականացնել համապատասխան միջոցառումներ՝ ուղղված հայկական խաղողագործության զարգացմանը և կատարելագործմանը:
- Աջակցել կազմակերպության անդամներին մասնագիտական խորհրդատվության իրականացմանը:
- Իրականացնել ծրագրեր՝ ուղղված ապրանքների իրացմանը, գնային քաղաքականության հիմնահարցին:
- Աջակցել խաղողագործության բնագավառում տնտեսվարող սուբյեկտների համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, շուկայում մեծ պահանջարկ

ունեցող խաղողի տեսակների աճեցման խթանմանը, խաղողագործության ոլորտում աշխատողների աշխատանքային պայմանների բարելավմանը:

- Կազմակերպության անդամներին ապահովել ՀՀ և արտասահմանյան խաղողագործության մասին տեղեկատվական նյութերով:
- Կորդինացնել կազմակերպության անդամների ուժերը և փորձը խաղողի արտադրության ծավալների ինտենսիվ ավելացման և ճյուղի եկամտաբերության բարձրացման նպատակով:
- Նպաստել էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական արտադրանքի արտադրության, շրջակա միջավայրի պահպանության և բնապահպանական խնդիրների լուծմանը:
- Իրականացնել խաղողագործության բնագավառի զարգացման ուղղված տարաբնույթ այլ ծրագրեր

Հարցերի կազմակերպման և լուծման հետ կապված Կազմակերպությունը համագործակցում է պետական տեղական ինքնակառավարման մարմինների, համապատասխան ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համակարգում կազմակերպության անդամների գործունեությունը համատեղ ծրագրերի մշակման և իրականացման համար: Գործունեության տարիների ընթացքում կազմակերպել ենք բազմաթիվ կլոր սեղան քննարկումներ, սեմինարներ, կոնֆերանսներ, ցուցահանդեսներ՝ կազմակերպության նպատակներին և խնդիրներին ուղղված ծրագրերի անցկացման և այդ խնդիրների լուծման ուղիներ գտնելու համար:

Կազմակերպությունը գործում է իր անդամների ֆինանսական ռեսուրսներով և մինչ այժմ ոչ մի դրամաշնորհային ծրագիր չի իրականացրել:

Հիմնադիր նախագահ Արտակ Սարգսյանը հանդիսանում է Հայաստանի լավագույն խաղողագործներից և իրականացնում է խաղողագործների շահերի պաշտպանության ուղղված միջոցառումներ, անցկացնում է իրազեկման աշխատանքներ, բարձրաձայնում է ոլորտային խնդիրները և մասնակցում է ոլորտային քննարկումներին ինչպես գյուղատնտեսության նախարարության, այնպես էլ տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպված:

«Հայաստանի խաղողագործների միություն» ՀԿ

Հետաքրքրության նամակ

«Հայաստանի խաղողագործների միություն» ՀԿ-ի հետաքրքրությունը հասարակական խորհրդի անդամակցությանը կայանում է նրանում, որ ցանկանում ենք մեր մասնակցությամբ նպաստել խաղողագործության զարգացմանը Հայաստանում: Խորհրդի անդամակցությունը հնարավորություն կտա բարձրաձայնել ոլորտային խնդիրները, քննարկել պատկան մարմինների և շահագրգիռ այլ կողմերի հետ, միասին մշակել այդ խնդիրների լուծման խելամիտ ուղիներ: Քանի որ կազմակերպության անդամները բոլորն էլ զբաղվում են գյուղատնտեսությամբ և շփվում են առօրյա հանդիպող խնդիրների հետ, լավագույնս են տիրապետում դրանց, խորհրդի նիստերի ժամանակ հնարավորություն կունենանք բարձրաձայնելու՝ հրավիրելով նախարարության ուշադրությունը դրանց վրա:

Անդամակցությունը կօգնի նոր կապերի հաստատմանը և միասնական նոր ծրագրերի իրականացմանը ուղղված գյուղատնտեսության և հատկապես խաղողագործության զարգացմանը: